

ՍԱՂՄՈՍ 23

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
ՏԵՐԸ, Սաղմոսերգուի Հովիվն է	ՏԵՐԸ Իր ժողովրդի Հովիվն է	Աստծո պաշտպա- նության հանդեպ վստահության արտահայտում (Վստահության Երգ)	ՏԵՐԸ մեր Հովիվը	Բարի Հովիվը
<u>MT ներածություն</u> Դավթի Սաղմոսը				
23:1-3	23:1-3	23:1-3	23:1-4	23:1-2ա 23:2բ-3
23:4-6	23:4 23:5-6	23:4 23:5-6	23:5-6	23:4 23:5 23:6

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց»)

ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն

ՀԱՄԱՏԵՔՍԱՑԻՆ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա.Սա հավանաբար բոլորի կողմից ամենաշատ հայտնի հաստատվածն է Աստվածաշնչում. մյուսներն են՝ Հովհաննես 3:16 կամ «սիրո գլուխը» 1 Կորնթացիների 13-ում: Սա հավատարիմ հետևորդի սուրբգրային աշխարհայացքն է: Ուշադրության կենտրոնում ՅԱՀՎԵՆ է և Նրա ներկայությունը, հոգատարությունը, և մատակարարումը:

Բ.Այն կիրառում է երեք տարբեր մշակութային փոխաբերություններ, որպեսզի նկարագրի աստվածաշնչյան հավատքի մտերմիկ անձնական առանձնահատկությունը:

1. Աստված որպես Հովիվ. Նրա ժողովուրդը որպես կարիքավոր ոչխարներ, Սաղմ. 23:1-2

2. Աստված որպես Առաջնորդ. Նրա ժողովուրդը որպես կարիքավոր թափառաշրջիկներ, Սաղմ. 23:3-4:
3. Աստված որպես Հյուրընկալ. Նրա ժողովուրդը որպես սպասված հյուրեր, Սաղմ. 23:5-6:

Գ. Այս Սաղմունան ունի տաս ԱՆԿԱՏԱՐ (շարունակվող գործողություն) ԲԱՅԵՐ: Աստված ներկա է ամեն օր, և ոչ թե միայն ճգնաժամերին: Սա է ՄԱտթ. 6:11-ի ՀԿ-յան հակակետը:

1. Ես կարիք չեմ ունենա – BDB 341, KB 338, *Qal* ԺԽՏԱԿԱՆ ԱՆԿԱՏԱՐ, տես՝ Սաղմ. 34:9,10:
2. Նա պառկեցնում է ինձ – BDB 918, KB 1181, *Hiphil* ԱՆԿԱՏԱՐ
3. Նա առաջնորդում է ինձ – BDB 624, KB 675, *Piel* ԱՆԿԱՏԱՐ
4. Նա վերականգնում է /նորոգում է/ հոգիս – BDB 996, KB 1427, *Polel* ԱՆԿԱՏԱՐ, տես՝ Սաղմ. 19:7
5. Նա տանում է ինձ – BDB 634, KB 685, *Hiphil* ԱՆԿԱՏԱՐ, տես՝ Սաղմ. 5:8, 31:3
6. Եթե անգամ անցնեմ – BDB 229, KB 246, *Qal* ԱՆԿԱՏԱՐ
7. Չարից չեմ վախենա – BDB 431, KB 432, *Qal* ԱՆԿԱՏԱՐ, տես՝ Սաղմ. 27:1
8. Նրանք (այսինքն՝ ցուպը և գավազանը) մխիթարում են ինձ – BDB 636, KB 688, *Piel* ԱՆԿԱՏԱՐ
9. Դու սեղան ես պատրաստում իմ առջև - BDB 789, KB 884, *Qal* ԱՆԿԱՏԱՐ
10. Բարությունը և ողորմությունը կհետևեն ինձ – BDB 922, KB 1191, *Qal* ԱՆԿԱՏԱՐ
11. Ես կբնակվեմ – BDB 996, KB 1427, *Qal* ԱՆԿԱՏԱՐ *վալ*-ի հետ, տես՝ Սաղմ. 27:4-6:

Դ. *UBS Ձեռնարկը* (էջ՝ 230) նշում է, որ այս Սաղմունքը չունի համազոր գուգահեռականություն: Բանաստեղծական տողերը չունեն համաչափություն (այսինքն՝ միևնույն երկարությունը): Այն ունի գազաթնակետային զարգացում՝ սեղմ բառերով: Սաղմունի կարճությունը ընդգծում է իր պատգամը և գորությունը:

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 23:1-3

¹ՏԵՐԸ իմ հովիվն է.

Ես *ոչնչի* կարիք չեմ ունենա:

²ԻՆՁ պառկեցնում է խոտավետ արոտներում,

Ինձ առաջնորդում է դեպի հանդարտ ջրերը:

³Հոգիս վերականգնում է: Իր անվան համար ինձ առաջնորդում է

Դեպի արդարության շավիղները:

23:1 Առաջին տողը բառացիորեն նշանակում է «ՅԱՀՎԵՆ է, որ հովվություն է անում ինձ»: Միակ ԲԱՅԸ *Qal* ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅՆ է (BDB 944, KB 1258): ՅԱՀՎԵԻ գաղափարը որպես Հովիվ արքայական տիտղոս էր ՀՄԱ-ում (այսինքն՝ Համմուրաբի): ՀԿ-ում այն կիրառվում է հետևյալ իմաստներով՝

1. նկարագրություն – Սաղմ. 78:52, Եզեկ. 34:11-13
2. ուխտի տիտղոս – Սաղմ. 80:1
3. փոխաբերություն – Ես. 40:11, Երեմ. 31:10
4. Մեսիան որպես Հովիվ – Հովի. 10:11, 1 Պետ. 2:25

Սա շատ հզոր պատկերավոր խոսք է՝

1. ոչխարների հետ հովվի մոտիկ և մշտական ներկայության համար
2. ոչխարների կողքին մշտապես ներկա հոգացողի և պաշտպանի կարիքի համար

❖ «Ես *ոչնչի* կարիք չեմ ունենա» Սա պարզ, սակայն համապարփակ արտահայտություն է: Այն չի կարող վերաբերել ցանկացած ցանկության կամ կարիքի: Այն նկատի ունի այն, ինչը անհրաժեշտ է

ոչխարի համար, որպեսզի լինի առողջ: Ամենավատ բանը, որ կարող էր Աստված անել մեղավոր մարդկանց համար, այն կլիներ, որ դրական պատասխաններ նրանց բոլոր էգոիստական, աշխարհիկ խնդրանքներին: Մեր հոգիների Հովիվը կանի և կտա մեր համար լավագույնը:

23:2 Այս համարը նկարագրում է Սաղմ . 23:1: Հովիվը գիտի, որ ոչխարը կարիք ունի՝

1. հանգստի
2. սննդի
3. ջրի

Նա այնպես է ապահովում այս բաները, որպեսզի ոչխարները կարողանան ընդունել (այսինքն՝ ճիշտ սնունդ, ջուր, այնպես որ կարողանան հեշտությամբ խմել): Մենք միայնակ չենք (տես՝ Սաղմ . 139): Մեր կյանքերում նպատակ կա, անգամ ընկած՝ մեղավոր աշխարհում: Մա չի ակնարկում առանց ցավի, առանց խնդիրների կյանք: Այլ հաստատում է, որ Նա մեր հետ է և մեր կողմից (տես՝ 1 Կորնթ . 10:13):

23:3 «Հոգիս վերականգնում է» Այս համարը անդրադառնում է և ընդունում ընկած մարդկության վիճակը (տես՝ Եսայի 53:6): Մենք կարիք ունենք «վերականգնվելու, նորոգվելու»: Այս ԲԱՅԸ (BDB 996, KB 1427) հենց նույն ԲԱՅՆ է, որը կիրառվում է «ապաշխարության» համար: Այս նույն ԲԱՅԸ գործածվում է Սաղմ . 23:6-ում մշտական հաղորդակցության համար խորանը՝ տաճարը վերադառնալու համար: Աստծո Հոգով առաջնորդվող հավատարիմ հետևորդները պետք է դարձի գան իրենց անձերից և մեղքից դեպի Աստծուն: Սուրբգրային փրկությունը՝

1. անկման հակադարձումն է
2. Աստծո հետ վերականգնված փոխհարաբերությունը
3. գիտակցված հայտնի մեղքերից դարձի գալը և ներում հայցելը ծածուկ մեղքերի համար (տես՝ Սաղմ . 19:12-14)
4. մտադրված դարձ դեպի Աստծուն (այսինքն՝ փոխհարաբերություն, հնազանդություն և երկրպագություն, տես՝ Սաղմ . 23:3բ)

Եբրայերեն տերմինը «հոգի» բառի համար *nephesh* (BDB 659, KB 711, տես՝ Սաղմ . 3:2 և Ծննդ . 35:18-ի գրառումները) և կարող է վերաբերել՝

1. մարդկանց – Ծննդ . 2:7
2. կենդանիներին – Ծննդ . 1:24, 2:19

ՀԱՏՈՒԿ ԹՄԱ . ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԿ-ՈՒՄ

❖
NASB, NKJV, NRSV, TEV «արդարության ճանապարհներում»
JPSOA, REB «ճիշտ ճանապարհներում»
NJB «փրկող արդարության ճամփաներում»

Համատեքստում սա վերաբերում է ապահով ճանապարհներին, որոնք տանում են ջրի և կերակուրի մոտ: «Ծիշտ» բառը կամ «արդարությունը» (BDB 841, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ԱՐԴԱ-ՐՈՒԹՅՈՒՆ) հիմնականում ունի բարոյական, խրատական առանձնահատկություն և հաստատ այստեղ դա է նկատի առնվում (տես՝ Եփես . 1:4, 2:10): Աստծուն ճանաչել նշանակում է ապրել Նրա հայտնված կամքին հնազանդվելով: Այս ենթատեքստը ամրապնդվում է Սաղմ . 23:3-ի սկզբնական արտահայտությամբ, «Իր անվան համար» (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ՅԱՀՎԵԻ «ԱՆՈՒՆԸ»): Նա «առաջնորդում է», որպեսզի մենք կարողանանք «ապրել» Իր համար: Մենք որպես հավատարիմ հետևորդներ հայտնում ենք Իրեն: Նա փրկում է մեզ, որպեսզի փրկի ուրիշներին: Մենք փրկվել ենք ծառայելու համար:

«Իր անվան համար» արտահայտության շուրջ տես՝ Սաղմ . 25:11, 31:3, 79:9, 106:8, 109:21, 143:11: Մենք ապրում ենք հայտնելու Իր բնավորությունը և նպատակները: Հաճախ Իսրայելը այդպես չէր ապրում (տես՝ Երեմ . 14:21, Եզեկ . 20:9,14,22, 36:22-38):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 23:4-6

**⁴Եթե անգամ մահվան ստվերի ձորից անցնեմ,
Չարից չեմ վախենա, քանի որ Դու ինձ հետ ես,
Քո ցուպն ու գավազանը՝ նրանք են ինձ մխիթարում:
⁵Մեղան ես պատրաստում իմ առջև
Իմ թշնամիների ներկայությամբ .
Գլուխս յուղով ես օծում, իմ բաժակը հորդում է:
⁶Իսկապես բարիքն ու ողորմություն
Ինձ են հետևելու կյանքիս բոլոր օրերում,
Ու հավիտյան ՏԻՐՈՋ տանն եմ բնակվելու:**

23:4

**NASB, NKJV
NRSV
TEV
NJB
LXX
JPSOA, REB**

**«մահվան շուքի ձորը»
«ամենախավար ձորը»
«խորունկ խավարը»
«մահվան պես խավար ագռավ»
«մահվան շուք»
«խորունկ խավարի ձորը»**

Սա է «ձորի» (BDB 161) և «խավարի», «խորը շուքի» (BDB 853) ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ: Շատ գիտնականներ կարծում են որ շք բառը կազմված է նշ և որ բառերից:

1. ստվեր /շուք/, խավար, մթություն – BDB 853, KB 1024
2. մահ, մեռնել – BDB 560, KB 563

ՀԿ-ում այն կիրառվում է տասնութ անգամ (միայն տասը Հորի գրքում)

1. մահվան համար – Հոր 10:21, 22, 38:17, Սաղմ . 107:10, 14
2. նեղության համար – Հոր 16:16, 24:17
3. հաճախ լույսին հակադրվող համատեքստում – Հոր 3:5, 12:22, 24:17, 28:3, 34:22, Երեմ . 13:16, Ամովս 5:8

Այն կիրառվում է փոխաբերական իմաստով, այս մեղավոր աշխարհում ընկած մարդկության սարսափելի, վշտալի և ճակատագրական փորձառությունների համար: Կյանքը սարսափելի է, սակայն Աստված մեզ հետ է (տես՝ Սաղմ . 23:4բ, գ, 2 Օրինաց 31:6,8, Մատթ . 28:20, 2 Կորնթ . 4:9, Եբր . 13:5):

❖ **«վախենալ ... մխիթարել»** Ինչպիսի՛ հակադրություն: Հավատարիմները առերեսվում են փորձություններին վստահությամբ, քանի որ Աստված նրանց հետ է (այսինքն՝ ծորհրդապակերում է Հովվի կամ Առաջնորդի ցուպը և գավազանը, հոգատարության և պաշտպանության Նրա գործիքները):

Խնդիրները գալու են: Մենք երբե՛ք դրանք միայնակ չենք դիմակայում: Երբե՛ք: Նա մեզ երբե՛ք չի քի կամ չի թողնի մեզ (տես՝ 2 Օր . 31:6, Հեսու 1:5, Եբր . 13:5):

23:5 Ոչ միայն Աստված մեր հետ է և մեր կողմից, այլ Նա վրեժխնդիր է լինում մեր համար հենց նրանց ներկայությամբ, ովքեր մեզ կվնասեն: Մշակութորեն ընդունված հյուրասիրությունը սովորաբար ցույց է տալիս Աստծո սիրո շռայլ առատությունը:

1. պատրաստված սեղան
2. օծված գլուխ
3. հորդող սեր

❖ **«հորդում է»** Սա հազվադեպ բառ է (BDB 924, «գտված»), որը ՀԿ-ում գտնվում է միայն այստեղ: Սաղմոս 66:12-ում տալիս է «առատության տեղ» (հեզելու չնչին տարբերությամբ): LXX թարգմանում է այն որպես «Քո բաժակը ուրախացնում է ինձ ինչպես ազնիվ գինին» կամ «Քո

բաժակը չափազանց արբեցնող է», որը ակնհայտ է, որ գաղափարը վերցրել է «գտվածից» որպես «արբեցնող»:

23:6 «բարություն» ԲԱՅԸ (BDB 373), ԱԾԱԿԱՆԸ (BDB 373 II) և ԳՈՅԱԿԱՆԸ (BDB 375 III) բոլորն էլ մատնանշում են այն, ինչը «բարի», «հաճելի», «օգտակար» է: Դրանք լայնորեն կիրառվում են Մադոնաներում, Առակացում և Ժողովողում: Ահա թե ինչ է Աստված ուզում անել Իր ուխտի ժողովրդի համար (այսինքն՝ 2 Օրինաց 30:9,15):

❖	
NASB	«գթասրտություն»
NKJV, NRSV	«ողորմություն»
TEV	«սեր»
NJB	«հավատարիմ սեր»
JPSOA	«հարատև սեր»
REB	«անմնացորդ սեր»

Սա հատուկ ուխտի ԳՈՅԱԿԱՆ է՝ *hesed* (BDB 338), որը ցույց է տալիս ՅԱՀՎԵԻ հավատարիմ, անվերապահ ուխտի հավատարմությունը: Ուխտի հավատարմությունը շատ ավելի ակնառու է դառնում Իսրայելի անհնազանդության ժամանակ (տես՝ Նեեմ. 9:6-38):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԳԹԱՍՐՏՈՒԹՅՈՒՆ

❖	
NASB, NKJV, NRSV, REB	«հետևել»
TEV	«ինձ հետ կլինեն»
NJB, LXX, JPSOA	«հետամուտ լինել»

Այս ԲԱՅԸ (BDB 922, KB 1191, *Qal* ԱՆԿԱՏԱՐ) ունի ավելի ազդեցիկ խիստ իմաստ, քան «հետևելը»: Այն արտահայտում է ակտիվ հետապնդում: Պարզապես մտածեք, Աստծո ուխտի սերը հետապնդում էր Իսրայելացիներին: Այն՝

1. ռազմական բառ է
2. որսորդական բառ է
3. իրավաբանական բառ է

Կա՛նգ առ: Պտտովի՛ր: Տե՛ս, թե ով է քեզ հետապնդում, այո՛, հենց քե՛զ:

❖ ՀԿ-յան այս համատեքստի վերջին տողը նկատի չունի հավիտենական կյանքը (այլ տեքստեր նկատի ունեն, տես՝ Հայտն. 21:3-7, 22:1-5), սակայն ուխտի բարության կյանքը (տես՝ 2 Օր. 30:3,15, 19): Սա պետք է ապրել ամենօրյա և կանոնավոր խորանի, տաճարի երկրպագության կյանքով:

- ԲԱՅԸ (BDB 996, KB 1427, *Qal* ՎԱԳԱԿԱՏԱՐ *վալ* -ով) կարող է նշանակել՝
1. նստել (նախնիների) հետ
 2. վերադառնալ (երբայերեն)

❖ «հավիտյան» Տե՛ս ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՎԻՏՅԱՆ

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ինչպե՞ս է ՅԱՀՎԵՆ նման հովվի:
2. Ինչպե՞ս են Սաղմոս 23:1-3-ի ԲԱՅԵՐԸ կիրառվում հավատարիմ հետևորդների ամենօրյա կյանքում:
3. Սահմանե՛ք «մահվան շուքի ձոր» արտահայտությունը:
4. Արդյո՞ք այս Սաղմոսը հանդերձյալ կյանքի մասին կանխատում է:
5. Ինչո՞ւ է այս Սաղմոսն այդքան կարևոր ցանկացած տարիքի հավատացյալների համար: